# ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՄՈՒՏՔ
Ծաղկազարդ

## Ամբոխը

Նրանց հեռանկարը – Ի՞նչ շահ ունեմ ես

Երբ նրանք մտածում էին, Հիսուսը եկել է իրականացնելու իրենց ցանկությունները

*«...Ովսաննա՜, օրհնյա՜լ է նա, որ Տիրոջ անունով է գալիս, Իսրայելի թագավորը:»* Հովհաննես 12:13բ

Երբ հասկացան, որ Հիսուսը չի անելու այն, ինչ իրենք էին ակընկալում

*«Իսկ նրանք աղաղակում էին. "Վերցրո՛ւ, վերցրո՛ւ և դրան խա՛չ հանիր":»* Հովհաննես 19:15ա

Արդյունքը – Իմ անձնակենտրոնության հակումը առաջնորդում է Խաբվածություն

## Հոգևոր առաջնորդներ

Նրանց հեռանկարը – Ես եմ ղեկավարը

*«Բայց փարիսեցիները իրար մեջ ասում էին. "Տեսնո՞ւմ եք, որ ոչ մի օգուտ չունեք. Ահա աշխարհը գնում է նրա հետևից:"»* Հովհ 12:19

Արդյունքը – Ղեկավարելու իմ բաղձանքը ստեղծում է Կարծրացած Սիրտ

## Առաքյալները

Նրանց հեռանկարը – Ո՛չ այսպես

*«Այնուհետև Հիսուսն սկսեց աշակերտներին հայտնել, թե ինքը պետք է Երուսաղեմ գնա, ծերերից, քահանայապետներից, դպիրներից շատ չարչարանքներ կրի, սպանվի ու երրորդ օրը հարություն առնի: Պետրոսը, նրան մի կողմ տանելով, սկսեց նրան հանդիմանել ու ասել: "Քա՛վ լիցի քեզ, Տե՛ր, այդ բանը թող չլինի քեզ:"»* Մատթեոս 16:21-22

Արդյունքը – Աստծո պլանի հանդեպ ունեցած անվստահությունը առաջացնում է Կուրություն

## Ի՞նչ է պատահում, երբ Հիսուսը մուտք է գործում քո կյանք կամ քո պարագաների մեջ

### 1. Հիսուսը ստեղծում է հրաշալի շեղում

*«Եվ նրանց ասաց. "Իմ հետևի՛ց եկեք, ու ես ձեզ մարդկա՛նց որսորդ կանեմ": Եվ նրանք, իսկույն նրա հետևից գնացին:»* Մատթեոս 4:19-20

### 2. Հիսուսը բերում է նոր հեռանկար

*«Նրա աշակերտները սկզբում այս բաները չիմացան, բայց երբ Հիսուսը փառավորվեց, այն ժամանակ հիշեցին, որ դա նրա մասին էր գրված, և այդ բաները նրա համար արեցին:»* Հովհաննես 12:16

Հեռանկարները պետք է շրջանակվեն հավատքով, ոչ թե զգացումներով

### 3. Հիսուսը առաջարկում է Օվսաննայի փորձառություն

Ազատություն ճնշող ծանրությունից

*«Այն ժամանակ նրանց ասաց. "Հոգիս մահու չափ տրտմած է. Այստե՛ղ մնացեք ու ինձ հետ արթո՛ւն կացեք:»* Մատթեոս 26:38»

*«Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: Իմ լուծը ձեզ վրա՛ վերցրեք ու ինձանի՛ց սովորեցեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք: Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև:»* Մատթեոս 11:28-30

Գաղտնիքը – Ի՞նչ ես պատրաստ տալու Հիսուսին

*«Եվ մի քիչ առաջ գնալով՝ իր երեսի վրա ընկավ. Աղոթում էր ու ասում. "Հա՛յր իմ, եթե հնարավոր է, թող այս բաժակն ինձանից անցնի. Սակայն ոչ թե ինչպես որ ես եմ կամենում, այլ ինչպես դու:»* Մատթեոս 26:39

Հաջորդ քարոզի թեման

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
Սարօ Խաչիկեան